ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 3 մարտի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը
Նախագահությամբ՝ Ռ.Պապայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Հ.Դանիելյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Շամիր Մարդանյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Շամիր Մարդանյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1 եւ 231.2 հոդվածների 1-ին մասերի, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197 հոդվածի 6-րդ կետի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1 եւ 231.2 հոդվածների 1-ին մասերի սահմանադրականությունը վիճարկելու մասով համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1 եւ 231.2 հոդվածների 1-ին մասերի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197 հոդվածի 6-րդ կետին, ապա քաղաքացին փաստորեն վիճարկում է ոչ թե դրա սահմանադրականությունը, այլ կոնկրետ գործով տվյալ նորմի կիրառելիությունը, ինչը Սահմանադրական դատարանի քննարկման առարկա չի հանդիսանում: :

Գործում առկա է պետական տուրքից ազատելու միջնորդություն:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Շ. Մարդանյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. եւ 231.2. հոդվածների 1-ին մասերի սահմանադրականությունը վիճարկելու մասով ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

Շ. Մարդանյանին ազատել պետական տուրքի վճարումից, նկատի ունենալով, որ նա առաջին կարգի հաշմանդամ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՀԱՐՏՈՒՂԻ ՐՈՒՐՔՈՒՆ